



# «ԱՂՔԱՏՆԵՐԻ ՄԵՋ ՀԱՐՈՒՍՏ ԼԻՆԵԼՆ՝ ԱՄՈԹ Է»

(ԿԱՄ՝ ՉԿԱՅԱՅԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԼԵՎՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ)

### Գործն է անմահ, Լավ իմացեք, Որ խոսվում է Դարեդար:

(Հովհ. Թումանյան)

Աշնանային այդ առավոտ գույժը ցնցեց մուրրակի բոլոր հորիզոնականներում ապրող ազնիվ հայորդիներին. – Ռուսաստանի ամենահեռավոր ու դաժան բանտերից մեկում վախճանվել է հայ մեծ բարերար ԼԵՎՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ:

Կայրերը գրեցին, աղմկեցին, ողբացին, ու մանր սկսեցին փնտրել «ԼԵՎՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ» անուն ազգանունը իրենց համար նորովի հայտնաբերելու ազգի տեր ու տնօրեններից ամենասրտացավին: ... Գտան... Այդ պահին, ավաղ, հաստատելով սևակյան ճշմարտությունը

«Եվ կտրվելուց հետո է միայն  
Երևում ծաղի բուն հաստությունը»:

Գուցե շատերի համար նոր միայն բացահայտվեց անժամանակ ու դաժանորեն «կտրված ծաղի» մեզ համար սյուն ու խոյակի «հաստությունը», սակայն դավադիրների համար վաղուց էր թիրախավորված այս խիզախ հայրենասերը, որը դեռ պատերազմի թռուռու հունում 1992-ին ձեռնարկեց Գանձասարի վանական համալիրի վերականգնումն ու շրջակայքի բարենորոգումը:

Վերջերս բախտ եմ ունեցել այցելել Արցախ, լինել Շուշիում, Ստեփանակերտում, Վանքում ու Գանձասարում: Հիանալի էր այն ամենը, ինչ որդիական հոգատարությամբ արել է Լևոն Հայրապետյանը հայրենի եզերքի համար: Հարյուրավոր ընկուզենիներով եզերված բարեկարգ ճանապարհը մեզ տարավ աշխարհի ամենագեղեցիկ բարձունքներից մեկը Գանձասար, որն այսուհետ, կարծում եմ, բացի ուխտատեղի լինելուց, կլինի նաև փառքի բարձունք ի հիշատակ Արցախի արժանավոր որդու Լևոն Հայրապետյանի:

Ուզում եմ իմ ընթերցողին ներկայացնել այն երկխոսությունը, որ ամեն օր հոլովվում է իմ մտքում և էլք է փնտրում բարձրաձայնվելու. այսպես.

**– Մեծարգո Լևոն Գուրգենի, ինչո՞ւ հենց պատերազմի տարիներին սկսեցիք Գանձասարի վերանորոգումը:**

Լ.Հ. – Բացի ռեալ անհրաժեշտություն լինելուց, դա նաև ռազմավարություն էր, նաև բարոյալքման ուղերձ մեր հակառակորդին առ այն, որ մենք տեր ենք մեր ամեն մի թիզ հողին, որ տեր ենք կանգնելու մեր հաղթանակին:

**– Լևոն Գուրգենի, դուք այսպիսի միտք էք արտահայտել. «Աղքատների մեջ հարուստ լինելն ամոթ է»: Հենց միայն այս խոսքերը բավական են կարծիք կազմելու ձեր ծագման ու դաստիարակության մասին: Ի նչ կասեք:**

Լ.Հ. – Մայրական տատս՝ հարազատ քույրն էր Գարեգին Նժդեհի: Մայրս Նախիջևանից էր, հայրս Ղարաբաղի Վանք գյուղից: Ես ծնվել եմ հայ, դաստիարակվել եմ Ղարաբաղում: Հայրըս գիտնական – քիմիկոս էր, նրա ճանապարհով չգնացի, կրթությունս շարունակեցի Մոսկվայում, դարձա ժամանակի ճանաչված լրագրողներից մեկը՝ նախ «Комсомольская правда»-ում, ապա «Огонек»-ում: Իմ հրապարակումներով միշտ եղել եմ հայապահպանման դիրքերում: Բիզնեսով զբաղվեցի ավելի ուշ:

**– Լևոն Գուրգենի, պատերազմի ժամանակ այսպիսի հարց է դրվում՝ զենքը, թե՛ գիրքը: Գարեգին Նժդեհն ասել է. «Ես օգտագործեցի երկուսն էլ»: Իսկ դու ի՞նչ:**

Լ.Հ. – Ճիշտ է, երկուսն էլ պետք են պլյուս էկոնոմիկան: Մեր երկրի նավթն ու գազը մեր ժողովուրդն է, նրա պոտենցիալ գենետիկան: Պիտի հասնենք նրան, որ

մեր դրսի ու ներսի հարուստ հայերը գիտակցաբար դառնան ազգի դոնորներ:

Մենք պիտի ունենանք հզոր էկոնոմիկա, վերացնենք կաշառակերությունը: Միայն էնտուզիազմը քիչ է երկիր պահելու համար: Ճիշտ է ասված. ուզում ես խաղաղություն պատրաստվիր պատերազմի:

**– Լևոն Գուրգենի, տարբեր հարցազրույցներում երբեմն հնչեցնում էք քննադատություններ Հայաստանի իշխանությունների հասցեին: Ի նչն է ձեզ ամենից շատ մտահոգում:**

Լ.Հ. – Ինձ ամենից շատ մտահոգում է արտագաղթը: Ամեն ինչ պիտի անեք, որ հայը մնա իր տանը, պահի իր ընտանիքը, իսկ դրա համար հարկավոր է համախմբել ամբողջ հայության ոչ միայն ֆինանսական, այլև մտավոր ուժերը նոր ծրագրերի ու նոր գաղափարների կենսագործման շուրջ: Սփյուռքում կան շատ կարող ուժեր, որոնք ոչ միայն ներդրումներ կարող են անել, այլև պետք է մասնակցեն ընտրություններին և օրենքների ձևավորմանը: Իսկ այդ հնարավորությունն առայժմ չի տրվում նրանց: Ես չեմ ուզում ոչ մի կառավարությունում պաշտոն զբաղեցնել, ես ուզում եմ օգնել իմ երկրին և այն փայլուն ղեկավարին, որը կշահի իմ ժողովրդի վստահությունը:

**– Մեծարգո Լևոն Գուրգենի, հայտնի է, որ հայրենի Վանք գյուղում կառուցել էք բարի և փայտի մշակման գործարաններ, զբոսաշրջային կենտրոն, հյուրանոցներ, որտեղ բազմաթիվ մարդիկ են աշխատում: Տարիներ առաջ իրականացրել էք 700 գույգ երիտասարդների նմանը չունեցող հարսնահանդեսը, որի արդյունքում այսօր հարյուրավոր փոքրիկ արցախցիներ են յույս աշխարհ եկել: Էլ չենք խոսում բանակին ցուցաբերած Ձեր հայտնի և անհայտ բարեգործությունների մասին, մարզադահլիճների, դպրոցների ու ճյուղավարձների կառուցման մասին: Ի նչ ծրագրեր ունեք այսօր:**

Լ.Հ. – Իմ ծրագրերը հայ ժողովրդի և Արցախի բարգավաճման ծրագրերն են: Երբ ազատվեմ, գնալու եմ Ղարաբաղ: Այս տարի 1400 գույգի համար ենք կազմակերպելու հարսանիք: Ամենամեծ արժեքն այսօր այս հողի վրա ծնվող երեխան է:



Սակայն, ավաղ, - ինչ իմանար մեծ բարերարը, որ սուլթանն ու ցարը «ձեռք ձեռքի տվին միևնույն թվին» (Պ.Ս.): Մեր անգործության վրա վստահ, մեր անմիասնության մեջ չկասկածող, մեր օտարասիրությանն ու ստրկամտությանն ամենօրյա ակնաստես մեծ ու փոքր մեր թշնամին ամեն օր թիրախավորում է մեր թանկ ու սերմացու արյունը, կացնահարում անմեղ գուրգեններին, հոշոտում Ավետիսյանների գողտրիկ ընտրանիքը, բարոյագրկում ու ազատագրկում հաղթած գեներալներին, անդուր քարանձավում կողպում «Մասնա Օռերին», բանտում սպառնում մեր հոգու և մտքի թռիչքը Միքայել Նալբանդյանից մինչև Լևոն Հայրապետյան:

Ինչո՞ւ... սիրելի հայեր, էլ ինչ պիտի լինի մեզ հետ, որ մեր ներսից վտարենք վախն ու ստրուկը, չարն ու նախանձը և

նուրբ կանգնենք մարդավայել արժանապատվությամբ:

**Հ.Գ.** Տարիներ առաջ Ջերմուկում «Անուշ» հյուրանոցում իմ ուշադրությունը գրավեց մի գեղեցիկ տիկին: Նա իր տասնամյա աղջնակի հետ էր: Շուտով մենք ծանոթացանք բարեկամիս նկարիչ Հայկ Շահբազյանի արվեստանոցում: Մարինեն շատ գեղեցիկ ձայն ուներ և երեկոները սրահում երգում ու արտասանում էինք, երբեմն թենիս խաղում: Երբ իմացա, որ նա նշանավոր բարերարի Լևոն

Հայրապետյանի կինն է, իսկ բալիկը՝ նրա դուստրը, զարմացա և հիացա տիկնոջ համեստությամբ ու բարձր կուլտուրայով:

– Տիկին Մարինե, ձեր վիշտն ամբողջ հայությանն է, իսկ ձեզ մնում է Լևոն Հայրապետյանի կյանքի ընկերը լինելու հպարտությունը և նրա գործը շարունակողի պատիվը: Եվ ես վստահ եմ, որ նրա մահով սկսվեց նրա անմահության ճանապարհը դե-

պի ազգի թանկ անունների շարքը՝ Ալ. Մանթաշով, Գ. Գյուլբենկյան, Ա. Մանուկյան, Ք. Քրքորյան... Լ. Հայրապետյան:

**(Վաստերը՝ տարբեր ժամանակներում տարբեր լրատվամիջոցներին տրված Լ.Հ-ի հարցազրույցներից)**

Սոնա ԿԱՐՊԵՏՅԱՆ  
Լրագրող

